


կարգադրութեան համար յատուկ հանրադրով մը հրաւիրած են ՂԱորին Վ. Տ. Տ. Սիրտիչ Ս. Կաթողիկոսը. կարգադրելիք խնդրոց մին է Լնթաւի մէջ գիւնթողիկ գւորոց մի բանալ, որոց հաստատութեան համար տեղացիք մեծ եռանդեամբ յօժարամիտ փափագ կը յայտնեն. և աղբային օգտի ցանկացող պատուարժան անձինք աւմենայն ջանիւք հոգ կը տանին այս ձեռնարկութիւնը որ յառաջ Իկատար հասցնելու : Այս գործոյն Ի նպատակ հանգանակութիւններ կը լինին և իւրաքանչիւր բարեակեր աղբային անհատ յօժարակամ քստ իւրում կարի շաբաթական բաժին կը գրուի, 5 փարայէն մինչև 40 փարայ. ամէն մէկ անհատինչ բաժին որ գրուած է ամեն շաբաթ ամբողջապէս հատուցանելու պայմանաւ : Իւրաքանչիւր թաղի մարդիկը գրելու և կանոնաւոր հաւաքումն ընելու համար Վ. Կաթողիկոսի և Թ. Խորհրդոց կողմանէ վստահութեան արժանի անձինք տեսուչ կարգուած են ամեն թաղի վերայ, ամեն մէկ տեսուչ ալ իւր ձեռքին տակ տասնապետներ ունին, որք տասնական տան բաժիններն հաւաքելու. հոգ պիտի տանին : Որքա իրենց հաւաքածները հաշուով իրենց տեսչին պիտի յանձնեն, նորքա ալ գանձապետին : Վերջապէս ամեն կարելի միջոց կը գործադրուի, որպէս զի այս գործը առանց թուլնալու յառաջ քայլէ և սկզբնաւորութիւն լինի գւորոցին հաստատութե : Ըրդէն շաբաթականներն կանոնաւորապէս սկըսան հաւաքուիլ, մէն մի սնհատ ուրախութեամբ կը վճարէ իւր գրուած բաժինը. մեծ յոյս ունիմք որ պիտի յառաջանայ այս խիստ օգտակար, մի անգամայն և ամենակարեւոր ձեռնարկութիւնը, որովհետեւ բաժինները մեծ բան մի չեն, և ամենէն աղքատն

անգամ կարող է վճարել առանց զըժուարութեան :
 Այնք եւս հրատարակելով սոյն աղբային օգտակար անդեկութիւնը կը գովեմք Լնթաւցի մեր սիրելի աղբայնոց այս ազնիւ եռանդը և աներկ միտ յուսով կրպակասեմք իրենց ձեռնարկած ազգօգուտ գործոյն հաստատութիւնը և արդիւնաւոր յարատեւութիւնը տեսնել, որ մեծ պատիւ և յաւերժական փառք է թէ իրենց և թէ ՂԱորին Վ. Ս. Կաթողիկոսի համար :
 Երանի այն աղբին, որ իւր մատաղ սերունդը դաստիարակելու եռանդ ու ջանքն ունի, որով իւր աղբային էութիւնը կը հաստատէ անխախտ և հիման վերայ. և բիւր երանի այն աղբին որ դաստիարակութեան հիմն ալ գիտէ հաստատվիմի վերայ դնել. ու չէ թէ աւազի Դաստիարակութեան հոգ տա նող աղբը եթէ գիտնայ, որ արտաքին երեւութական ձեւերը, զարդերն ու հանդիսաւոր արարողութիւնները ոչ դաստիարակութիւն են և ոչ յառաջադիմութիւն, նա առաջին քայլն առած կը լինի : Այլ մաղթեմք ինչպէս մեր բոլոր սիրելի աղբի համար, նոյնպէս և Լնթաւցեոց որ այսպէս ճշմարիտ դաստիարակութեան ցանկացող եւ հետեւող լինին :



Մտկուայի մէջ սկսած է հրատարակուիլ մի նոր պարբերական տետր ՓԵՐՈՍ անուամբ խմբագրութեամբ Օլարմայրայ Սերեանց : Սոյն տետրի առաջին թիւն միայն մեր ձեռքն հասաւ, որոյ մէջ քանի մի բանաքննական յօդուածներէ զատ կայ նաեւ մի դիտողութիւն Ռուսերէն Դիվա (անգաւտան) լրագրի մի հաստուածոյն վերայ, որ հրատարակուած է Վեհափառ Գէորգ Դ. Կաթողիկոսի նկատմամբ :

Թէ՛ ուսուսերէն թերթի հրատարակած տեղեկութիւնն, և թէ՛ փԱՐՈՍԻ դիտողութիւնն բաւականին հետաքրքրական լինելով՝ հարկ կը համարիմք Միտի միջոցաւ հրատարակել. թէ՛ եւ աւելի կը փափագէինք, որ փԱՐՈՍ իւր դիտողութիւնն ուսուսերէն գրած լինէր ուսուս լրագրոյն դէմ:

Ընտանաբնի փԱՐՈՍԻ յօդուածն, զոր կը հրատարակեմք առանց բան մի աւելցնելոյ կամ պակսեցնելոյ:

ՌՈՒՍԵՐԷՆ ՆԻՎԱ ՕՐԱԳԻՐՆ

ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԵՐԱՅ

Ի փեթեղապուրկ հրատարակուած 'Նիվա' (Ընդատան) անունով պատկերազարդ օրագրի ներկայ 1872 ամի 13 թուոյն մէջ տեսանք տպագրուած մեր Վեհափառ Գեորգ Գ. Կաթողիկոսի պատկերը և կենսագրութիւնը, որի միջէն արժան եմք համարումք քաղել քանի մի տեղեկութիւնք, որք մեզ, խոստովանում եմք, գուցէ և այլոց, մինչև ցայժմ՝ յայտնի չէին:

Յետ տալոյ Վեհափառ Կաթողիկոսին զարժանին գովասանութիւնը ՚ի մասին խելքի, գործունէութեան, աւրիութեան, և այլն. յիշեալ օրագիրը նկարագրում է՝ թէ՛ ինչպէս մեր կաթողիկոսն ընդունում է իւրեան ներկայանալ ցանկացողներին. «Պատրիարքական ընդունելութիւնքն, ասում է նա, լինում են Ալջմիածին ընդունելութեան գահընթին մէջ, պատրիարքն նստում է լճառում, բարձերի եւ թանկագին խալիչաների վերայ. ամենայն սր, սր մօտենում է նորան՝ ծունկ է չորում և համբուրում է նորա ձեռքերը և տոնները»: Թէպէտ և Ալջմիածին եղած չեմք, և այն տեղի սովորու-

թիւնքը չգիտեմք, բայց այսու ամենայնիւ յոյժ երկբայում եմք, թէ՛ այն տեղ սովորութիւն լինի ծունկ չորել և համբուրել Կաթողիկոսի ոտները:

Այն օրագիրն պատմում է նաև՝ թէ՛ «ըստ հին սովորութեան», որպէս թէ՛ «միայն եպիսկոպոսներն կարող են նստիլ Կաթողիկոսի մօտին և միայն այն ժամանակ, երբ որ նա հրաւիրէ, և թէ՛ միայն նա կարող է խօսիլ Կաթողիկոսի հետ կամ պատասխանել՝ առ որ Կաթողիկոսն գառնայ հարցմունքով»: «Հանդիսաւոր օրերում, շարունակում է յիշեալ օրագիրն, պահուում է Ալջմիածինում խոստագոյն կարգ (էթիքէթ), և միայն բարձրաստիճան եկեղեցականք ունին իրաւունք մատչելու պատրիարքին, իսկ ստորին եկեղեցականք, որպէս և ժողովրդականք կարող են տեսանել նորան միայն սաւառի մէջ, և այն Շարաթ և Վիւրակէ օրերում»: Այս ամենայն տեղեկութեանց վերայ բան ասել կարող չեմք, որովհետեւ, որպէս արդէն ասայինք՝ Ալջմիածինում եղած չեմք եւ այն տեղի սովորութիւնքը չգիտեմք, որպէս և տեղեկութիւն չունիք ուսուս օրագրի յիշած «հին սովորութեանց» վերայ. ուստի յոյժ երկբայում եմք և յայս մասին՝ թէ՛ այդ ամենայն ճիշդ լինի:

Ի վերջոյ չեմք կարող չիշատակել նոյն ուսուս օրագրին մէջ բերուած մի այլ տեղեկութիւնք՝ թէ՛ «մեր Վեհափառ Կաթողիկոսն հիմնած է Ալջմիածինում ԱՎԿՆԱԿՈՒՄ»: Բայց ցուում եմք՝ որ սոյդ տեղեկութիւնք յոյժ կարճաւոր է, որովհետեւ նորանից չեմք կարողանում իմանալ թէ՛ այդ ակադեմիայն քանի կուրս (դասատուն) է բաժանուած առ այժմ, ո՞ր ուսմունքն աւանդուում են նորա մէջ, ո՞րքան աւկադեմիայք կան, ակադեմիկներն ո՞ր

են, որպիսի իրաւունքներ է տալիս այդ
ակադեմիայն իւրեանց ուսումը աւար-
տող ակադեմիականներին, և վերջապէս՝
որպիսի և որքան գիտութիւն է պա-
հանջուում այդ բարձրագոյն ձեմարա-
նը մտանդոյներից: Այս ամենայն տե-
ղեկութիւնքը, որպէս և ուսուցիչներ
յիշած « հին սովորութիւնքը », գու-
ցէ ծանուցանէ և բացատրէ մեզ Այլ-
միասնական Արարօք ամսագիրն:

ԲՈՅՆԻ ԹՈՂՆՈՅ

Միասնականութիւն հիանալի տե-
սանի ՚ի բոյնս թուչնոց, չիք որ որ նը-
կատիցէ և խանդաղատիցի ոչ ընդ երկ-
նայինն բարութիւն, որ շնորհէ տկա-
րին ճարտարութիւն, և կանխազգու-
շութիւն այնմ՝ որ անիոյթն է ամե-
նեւին:

Ի սրճնել ծառոց ծաղկամբք՝ ճար-
տարք բիւրազդի սկիզբն առնուն գոր-
ծել, սքրա շիզս յարդի առեալ՝ ՚ի ճեր-
պրս վաղեմի որմոց տանին, և գոքա ՚ի
լուսամուտս տաճարաց շինւածս գոր-
ծեն, մինչ այլք կորդեալ տանին թելս
՚ի ձարից զամբկի, կամ խուն ինչ դեղ-
մին, զոր մտքին ՚ի խալես թաղու առ-
կախ: Այն ՚ի նստա փայտահատք, որք
՚ի կատար ծառոց կբեալ զճիւղս ընդ-
իրեարս սնդեն. են և ստայնիկք՝ որք
զբանդակենի ՚ի տատասկէն քաղեն:
Կանգնին ազարանք բիւրաւորք, եւ
մէն մի սպարան է բոյն մի. և մէն մի
բոյն հրաշալի կերպափոխութեանց է
օթեւան. զառաջինն ձու գեղափոյլ,
ապա ձագ աղուամաղ, ուր ուրեմն
ձագն զգենու փետաւրս, և մայրն մոր-
զէ զնա յտրնկելիս ՚ի թառս անդ,
որ յետ սակաւուց յեղերաց որրանին
հակեալ ՚ի վայր զգլուխ սոյ զառա-
ջինն ակնարկ ՚ի բնութիւն. ընդ որ

զարմացեալ եւ սրկուցեալ գրորի ՚ի
կոյս եղարացն, սրոց անձանօթ է տա-
կա ին սրտիկեր հրաշարեացս՝ Նոյմամբ
ճնողացն ձայնի միւսանգամ երանէ
յանկոյնոյ անտի եւ անտիական ար-
քայս այերաց, որ զմանկութեանն կրէ
տակաւին թագ զգլխով, համարձակի
նկատել զերկինն ամբաւ, զյարածուփ
կատարս շածեաց և զանդունդս դա-
լարեաց, որ ընդ կողնեաւն հայրենի:

Ի սոյց այն ինչ անտառք ասանջա-
կանք ՚ի գալուստ նոր հիւրոյն բերկ-
րին, թուչուն մի բազմօրեայ անկար ՚ի
թեւոց եկեալ առ վտակաւն անկանի,
անձնատուր եւ մենաւոր խաղաղու-
թեամբ մնայ մահու յափուես անդ,
ուր երբեմն զուրախութեցն երգեաց
նուագ, և ծառք անդոյն բարձեալ ու-
նին տակաւին զըոյն նորա և զխաղա-
ղաւէտ ժառանգորդս:

Ի դէպէ աստ նկատել զայլ իմն ու-
րէնս բնութեան: Ի կարգի մանրերամ
հաւուց բազում այն զի ձուք ՚ի սե-
փական երանգ արուին են ՚ի նկար:
Այնտահաւն ՚ի մորենիս, հաղարջենիս
և ՚ի մոցսոս մերոց սրարտիզաց առ-
նէ բոյն, եւ ձուք նորա սխտակաւոր
՚ի գոյն նափսրտի, որ զթիկամբն: Այլ զի
գտեալ է մեր ՚ի փորդենիս մի ՚ի բու-
նոց անտի գաղտակուր կոնքի ՚ի նմա-
նութիւն՝ ո՛նելով ՚ի միջի քառեակ
մարգարիտս կոպուտակս և վարդ մի
ցողալից ՚ի վերուստ վայրահակ. եզ-
նահաւն արու կայր անշարժ յոսո թը-
փոյն, որ առնթեր, իբրեւ ծաղիկ
ճիրանի և կապուտակ: Այլ այսոցիկ
սրտակեր ՚ի ջուրս նկարէր, ունելով
՚ի յատակի ստուեր ընկուղենուց, որոյ
յետիուսէ լուսանայր այդն:

Այսու մանր նկարաւ եցոյց մեզ
Տէր զօրինակ շնորհաց, որով զբնու-
թիւնն զարդարեաց:

ՇԼԹՕՊԻԱՆ